


5689

308(42, 925)



Ppchu  
1883

308(47.925)  
323(04)  
R-58

ԱՐՑՈՒՐՆԻ

# ԱՐԱԼՔԱԼԱՎԵՅԱԿ

ԳԱՏՈՎՈՒԹՅԻՆՆԵՐ

Կեղծաւոր, հան նախ զգելանդ յականէ  
քումմէ, և ապա հայեսցիս հանձն զշիզն  
տվանէ եղբօր քա:

Ու-Եռ-Եպան :

Խելօր հմաւար զիանականը  
Հիմքը ամառ կանէ տանը

Զի-Ա-Ն :

(39)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊՈՒՐԱՆ ՄՊՎԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԵՎ ԲԱԴԻ

1883

2010

193. առջե մարդու շաբաթ մերժեց  
Հ. Տ. Խոչվածը, 1883 թ 27 դեկտ.  
308(42 925)  
323404) ՊԵՏԱԿԱՆԻ  
Հ-58

## ԱԽԱԼՔԱԼԱՔԵՑՈՒ

### ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆԵՐ

1007 3452  
32968

Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ  
քումնէ, եւ ապա հայեսցիս հանել զշիղն  
յականէ եղարօ քո:

Ու-Եպարքան:

Խելօք հմուտ զիտնականը  
Հիմքը ամուր կանէ տանը:

Զե-ան:

### ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎԱ-ՎԱՐԴՆԵՍԵՆԻ ԵՎ ԸՆԿ.

1883



6655-62

7/1883

ԱԽԱՔԱՍՁԵՑՈՒ ԴԱՏՈՂՈԹԻՒՆՆԵՐ

Այս քանի օր է մեր Ախալքալաքի ամենայն շրջանում, խօսակցութեան նիւթ է դառել, այս օրերս լոյս տեսած պ. Խորխոռունու «Ախալքալաքեցու վէրքերը» վերնագրով բրօշեւրան:

Այս, լսել էինք թէ գրականութեան ասպարիզում գտնվում են և մի քանի խարդախ գործողներ, որոնք միշտ իւրեանց գրեչը եւրեանց գրանի օգտին են ծառայեցնում՝ սուտը ուղիղի տեղ ասում, ուղիղը ստի տեղ: Մենք կասկածում էինք և չէինք հաւատում այս իրողութիւններին. բայց երբ մեր ձեռքը ընկաւ պ. Խորխոռունու գիրքը, և երբ կարդացինք նորան, բալարովին համոզուեցանք վերովիշեալ իրողութեանը: Պ. Խորխոռունու գիրքը ծայրից մինչև վերջը լիքն է ամենայն տեսակ սուտ և վերին աստիճանի վայր ի վերոյ գրապարտութիւններով մեր համեստ հասարակութեան վերալ: Ալժմ ամէն մի Ախալքալաք-

201

Доз. Цензурою. Тифлисъ, 5-го Мая 1883 года.  
Тип. М. Вартанянца и К-", на Тройц. пер. д. № 11.

ցի, որը կարդացել է այդ գերքը, զզուանքով  
է լիշում և ափսոսում է իւր ձեռն առնե-  
լուն:

Մենք արժան ևս չեինք համարել այդ գրքի  
դէմ մի բան ասել. որովհետև ամբողջ Ախալ-  
քալաքը շատ լաւ ճանաչում է ալ. Խորխո-  
ռունուն՝ գիտէ նորա անցեալը և ներկան.  
բայց հեղինակին և նորա համախոհներին չու-  
րախացնելու իրանց քաջութեան համար, և  
մի քանի միամիտներին կասկածանքից ազատ  
պահելու, ստիպուած գրեցինք այս տողերը:

Խօսենք գրքի մի քանի գլխաւոր կէտերի վե-  
րայ: Գրքի Կ երեսում ալ. Խորխուռունին Ս.  
Աւետարանի խօսքը մէջ բերելով Ախալքալա-  
քեցւոց վերաբերութեամբ ասում է՝ «Հաւա-  
տալ և ոչ ումեք»: Պարոնի մտքով ամբողջ Ա-  
խալքալաքեցիք ծծկեր երեխայից սկսած՝ մինչի  
զառամեալ ծերը՝ բոլորը շարլատաններ, խաբե-  
քաններ, աւազակներ են և այլն: Ո՛րքան յան-  
դգնութիւն և որքան վստահութիւն արտասա-  
նելու այդ խօսքերը. արտաւորել պատիւը և  
համարումը այն քաղաքի հասարակութեանը,  
որը իր ձեռքից եկած միջոցը չէ խնայել և  
մինչի հիմայ էլ չէ խնայում օգնել բարեգոր-  
ծական ընկերութիւններին, իւր աղքատներին,  
և վերջապէս Հայաստանի ամէն կողմից եկած

ժողովարաններին բաւականութեամբ ճանա-  
պարհ է դրել: Պ. Խորխուռունու կարծիքով  
Ախալքալաքը մի Սօգում և Գամոր է դարձել,  
ուրեմն ինքը և իւր գերդաստունը Ղովտ\*):

Պարոն Խորխուռունին յարձակվում է թղթա-  
խալզով պարապողների և հարբեցողների վրայ.  
ի հարկէ դա շատ լաւ է: Բայց ի՞նչ կասես ըն-  
թերցող, այն մարդուն, որը ամբողջ հասա-  
րակութեան անուանում է հարբեցող, թղթա-  
մոլ և այլն: Այն, հասարակութեան մէջ մենք  
չենք ասում, թէ չկան ոչ մինը և ոչ միւսը.  
բայց մի քանիսի անձնաւորութեան մելքը մի  
ամբողջ հասարակութեան վերայ բարձել, դա  
վերին աստիճանի լոգիկայից զուրկ դատողու-  
թիւն է, դա երեխայի և տգէտի կարծիք է:

Պարոն Խորխուռունին մեր համեստ կանանց  
մաքրասիրութիւնը և այդ պատճառով շուտ  
շուտ բաղանիք գնալները, անուանում է կոռուփ  
տեղեր: Ուրեմն մեր բաղանիքները կոռուփ դաշ-  
տեր են իսկ կանայքը գլատիադորներ (ըմ-  
բշամարտներ):

Ախալքալաքցի կանայք, շտապեցէք, ձեր  
խորին յարգանքը և շնորհակալութիւնը յայտ-

\*) Ղովտի պատմութիւնը պ. Խորխուռունուն  
քաջ յայտնի է որպազ ուսումնական մարդուն

նել պ. Խորխոռունուն, որ նա ձեր ունեցած տաղանդը, ձեր քաջութիւնը, մի գրչի շարժելով գտաւ: Նա ձեզ համեմատում է Վ դարի Հայաստանի կանանց հետ, բայց փոխաբերական մտքով:

Այժմ պարզենք մեր միտքը, և պ. Խորխոռունու անմշակ միտքը բացատրենք:

Ախալքալաքը ունի մօտ 600 տուն բնակիչ, բայց այսքան բնակչի համար ունի միայն երկու փոքր բաղանիք և այն ևս Աստուած բաղանիք համարէ: Ա.Հա այս երկու բաղանիքներում է որ մենք և մեր գերգաստանը մաքրվում ենք: Երևակալեցէք ձեզ 300 խորանահարդ արշին մի սենեակ, որտեղ լողանում են 100-ից աւելի կանալք, և որտեղ գտնվում են չորս փոքր ջրի խողովակ, որոնք մի ժամուալ ընթացքում միշտ տալիս են միջին թուով 50 վետրոյ ջուր: Մեզանում կանանց բաղանիքը սկսվում է ժամը 3-ին ճաշից յետով և տևում է մինչի ժամի 6-ը: Ուրեմն 3 ժամուալ ընթացքում 100 անձի համար մեր բաղանիքները տալիս են 150 վետրոյ ջուր: Յարգոյ ընթերցող, դուք երևակալեցէք թէ այս 1<sup>½</sup>, վետրոյ ջրով մարդ կարո՞ղ է մաքրուի մեր ունեցած անշնորհք և անյարմար փոքր բաղանիքներում: Եւ այս բաղանիքներում իւ-

րաքանչիւր կին աշխատում է աւելի շատ ջուր ձեռք գցել և մաքրվել, և այս բանից իհարկէ առաջանում է մասնաւոր վէճեր: Պ. Խորխոռունի, քեզ եմ հարցնում, ով է մեղաւոր, բաղանիսի տէրը, թէ մի այլ ոք, որ կանալք ստիպուած, միմեանց հետ կովում են մաքրասիրութիւնից գրգուած, որին դուք անուանումէք կոռւարացներ:

Պ. Խորխոռունին խօսելով իւր գրքի 6-ր երեսում կանանց դրութեան վերայ ասում է: «Տնական թագաւորութեան թագուհին—կինը գեռ հիւծում է ստրկական լծի տակ. Նա տղամարդու աչքում մի գուարճութեան առարկայ և միանգամայն զանազան ծառայութիւններ վարող աղախին է»: Այս նախագասութիւնը գրելիս պ. Խորխոռունին իւր սենեակում փակուած, իւրեան կարծել է լուսաւորեալ Եւրոպացի, իսկ իւր սենեակից դուքս գտնուածները Ասիացի տգէտներ և հարեմական—ստրկական ժարդիկ: Երևակայական պալատներ սարքել և մեծ մեծ ֆրազներ ջարդել շատ հեշտ է պ. Խորխոռունի, բայց գործնական տեսակէտից նայել, քո ինչու պէտքն է. քո միայն նպատակն է, որ անփորձները ասեն, «թէ ինչ մեծ խելք, ինչ երևելի միտք, որքան զարգացողութիւն, որքան լուսաւորեալ գաղափարների տէր

է պ. Խորխոռունին, որ այս տեսակ նոր և ազատամիտ մտքեր է յայտնում»:

Ամէն մի բարեմիտ և հասկացող մարդու համար կանանց ազատութիւնը, կանանց գործունէութիւնը, մի աւետիս, մի սփոփիչ ուրախութիւն կ'պատճառեն նորան: Մեր Ս.խալքալքալքի կանալքը այն հարեմական դրութեան չեն, ինչ որ պ. Խորխոռունին է երևակայում: Մեր կանալքը այցելում են սիրողների ներկայացումներին, վիճակախաղներին, հասարակական հրաւերներին. հարսանիքներում և հրաւերներում մեր կանալքը տղմարդկանց հետ խառն պարում են, խօսում են, վիճում են և այլն: Եթէ օտարը նորա հետ խօսելու լինի, նա համարձակութեամբ կ'պատասխանէ:

Պ. Խորխոռունին ասում է, «կինը զանազան ծառայութիւններ կատարող մի ազախին է»:

Ի՞նչ էք հրամայում պ. Խորխոռունի, միթէ մայրը իւր երեխային իւր ստիխքով չ'կերակրէ, չ'պատրաստէ միթէ կերակուր և չը կարկատէ իւր որդւոց և մարդու շորերը: Միթէ քո ցանկութիւնն է պ. Խորխոռունի, որ մեր նահապետական և Հայկական տները շրջապատվեն պովարներով, լաքէներով, աղախիններով և սորանց օգնականներով. ինչպէս Թիֆլիսիցիք են անում: Շատ շնորհակալ ենք Ձեզանից

պ. Խորխոռունի այս լաւութիւնը մեր մէջ տառածելուք համար:

Պարոն Խորխոռունի, երեխ դուք ցանկանում էք մեր կանանց համար Ս.նդղիալի կանանց ազատութիւնը: Դա շատ լաւ ցանկութիւն է, բայց պէտք է մտածելով խօսիլ: Երևակալեցէք ձեզ Ս.խալքալքեցի բարձրադիրք, պատուաւոր, մի նշանաւոր ընտանիք, որոնց կանալքը իւրեանց ազատ պահելով, բայց նոյնը արանց կողմից չունենալով և երկուսի կողմից ազատութեան սահմանի չափ, և լուսաւորութեան գաղափար չ'ընելով փոխագարձաբար, իւրեանց պատուի ամենաբարձր գագաթնակէտից, ընկան անպատվութեան խորխորատի մէջ: Եւ ահա այս տեսակ մի նշանաւոր գերգաստուն, որը ազատութիւն էք վայելում, ինչ վախճան ունեցաւ: Պ. Խորխոռունի դուք շատ մօտ ծանօթ էք այդ գերգաստանի հետ: Մինչև որ ընդհանուր զարգացողութիւն և ուսում չի տարածուի մեր մէջ, ոչ տղամարդիկ կարող են ազատ պահել իւրեանց դէպի կինը, և ոչ կինը դէպի տղամարդը: Եթէ ոչ հետեանքը շատ վատ կ'լինի: Մեր կանանց ազատութիւնը լինելու է աստիճան առ աստիճան, մէ բայ չէ լինի պ. Խորխոռունի Պ. Խորխոռունին ասում է՝ «Ս.խալքալքա-

քեցին գիտէ հանգամանքի, ժամանակի և տեղի համեմատ ձեւակերպութիւն և զանազան գոյներ ստանալ, նայելով թէ ո՞ր ձեւը, ո՞ր գոյնը իր անձնական շահին օգտակար է կամ իւր բանին ձեռք կտայ և այլն»:

Այս, պ. Խորխոռունի դա իսկապէս քո պատկերն ես նկարագրել և ոչ Ախալքալաքեցւոց։ Դու սորանից 2—3 տարի առաջ պինտ Մեղուական էիր, որովհետեւ քո անձնական շահն այդ էր պահանջում, իսկ երբ աղքատ խմբագրութեան 500-600 ռ. կուլ տուիր, դիմակդ դարձուցիր և հիմնովին Մշակական դարձար, իսկ Մեղուտին սիերիմ թշնամի։

Պարոն Խորխոռունի դուք շոշափում էք մեր լաւ քաղաքացիների անձնական պատիւը, և ասում էք՝ «Մէկը սուտ բարեկամ հանդիսանալով մի թղթամոլ և գինեմոլ երիտասարդի, նորան փողէ տալիս և նոյն մոլորութիւններից օգուտ քաղելով՝ թղթախաղի միջոցաւ, ոչ միայն իւր փոխ տուած դումարներն առնում այլ և տիրում է նորա կալուածներին և այլն։» Պ. Խորխոռունի ձեր կարծիքով ով ում փողէ տոկոսով տալի, նա վատ մարդ լինելուէ։ Ձեր ակնարկած անձը ամենիս շատ լաւ ծանօթէ։ Ի՞նչ կասես ընթերցող, եթէ, օրինակի համար, Ախալքալաքում լինի մի հա-

ըուստ կալուածատէր երիտասարդ և նորա արած մեծ քանակութեամբ առուտուրին բոլորը նախանձուին, ի՞նչ ես կարծում եթէ այդ անձը քեզանից փող խնդրելու լինի տոկոսով, դու չե՞ս տալ։ Այդպէս ես սպատակել է նոյն անձի հետ։ Նա, կարծելով թէ իւր փողերը ամենաապահով տեղ կտայ քան թէ ուրիշի մօտ, մեծ գումար լանձնել է պարոնին, որը թէ մի քանի պօդբատաներում և թէ թղթախաղերում կորցնում է թէ իւր ձեռքի գումարը և թէ ուրիշներից վերցրած 40000-ը։ Այս գէպքում ի՞նչ անէր քո ակնարկած անձը, իւր 12 հազարը չ'ապահնչէր և իւր գերդաստանը խեղճ թողնէր։ Նա, չ'նայելով որ օրէնքով տիրապետեց նորա կալուածներին, բայց էլի իւր 4000-ը կորաւ։

Սաենք, Պ. Խորխոռունի, քո կարծիքով ով ում փողէ տալի շահնցողութեան, ունենալու է մի որ և իցէ ակնկալութիւն։ ձեզանից ի՞նչ ակնկալութիւն ունիր նոյն անձը, որ տուեց ձեզ 2000 ըուբլի, որը գժուարանում էք վճարել։ Ուրեմն նա մեղաւոր է եղել, որ ձեզ փողէ տուել և չէ կարողանում ստանալ։ Յետոյ ասում էք՝ «Մի պարոն 500 ըուբլի խոստանալով նուիրել ուսումնարաններին իւր հանգույեալ 100 հազար կարողութիւն թող-

նող հօրը, 'ի ցուցս մարդկան, թաղում է ներ-  
քողներով, աշակերտների և աշակերտուհիների  
լուղարկաւորութեամբ, և երբ գպըոցական վար-  
չութիւնը մի քանի ամսից լիտով խնդրում է  
լիշեալ գումարն, երախտագետ պարոնը, զա-  
նազան պատէ 'ի պատ պատճառներով մերժում  
է վճարել»:

Ամէնքին քաջ լայտնի է, մանաւանդ քեզ պ.  
Խորիսուունի որ նոցա հայրը մեռնելիս, կտա-  
կել էր տեղւոյս ուսումնարաններին 150 ըուբլի,  
այն պայմանաւ, որ այդ փողի տոկոսով սաներ  
պահուին նոյն ուսումնարաններում։ Բայց նո-  
րա ժառանգները իւրեանց հօր լիշտակը աւե-  
լի անմահացնելու նպատակաւ այդ 150-ը 500  
ըուբլու հասցըին, և լայտնեցին որ տոկոսա-  
բեր թղթերով կ'յանձնեն ուսումնարանի վար-  
չութեանը։ Մի քանի ամսից ետ ուսումնա-  
րանի վարչութիւնը դիմում է հանդուցելոյ  
ժառանգներին և խնդրում է այդ 500 ըուբ-  
լին, պատճառ բերելով ուսումնարանի խար-  
խուլ գրութիւնը նորոգելու։ Ժառանգները  
պատասխանում են թէ՝ չ'նայելով մեր հօր  
կտակին և մեր ցանկութեանը և ուսումնա-  
րանների ստիպողական անելք գրութիւնը նկա-  
տի ունենալով փոխանակ տոկոսաբեր տոմ-  
սակիներ տալու, պատրաստ ենք երբ ուսում-

նարանի շինութիւնը սկսեն, նաղտ փողով 500  
ըուբլին վճարել։ Ալդպէս ևս տեսւմ է մի  
քանի ժամանակ։ Սրանից մի երկու ամիս յա-  
ռաջ նոյն ժառանգները ստանում են նահան-  
գական գատարանից իւրեանց հօր կտակի կա-  
նոնաւոր հաստատութիւնը։ Նոքա յալտնում են  
ալդ մասին թէմական վերատեսչի օգնականին,  
և ասել են՝ եթէ ուսումնարանը նորոգելու  
լինք 500 ըուբլին կտանք, իսկ եթէ ոչ, այժմ  
նոյն գումարի տոկոսաբեր թղթերը պատրաստ  
է, երբ կամենաք կ'յանձնենք։ Այդ ժամանակ-  
ները ոչ մի պատէ 'ի պատ խօսքերով չեն  
հրաժարվել վճարելու իւրեանց խօստացածը,  
ինչպէս պ. Խորիսուունին է ասում։

Երկրորդը մոռացութեան է տալիս իւր նոյն-  
քան գումարի խօստումը իւր կնոջ թաղման  
կամար։ Պ. Խորիսուունի ինչք էք ուրանում.  
ինչք էք զրպարտում այն անձին, որը փո-  
խանակ 500-ի նուիրում է 10 գեսեատին (20  
օրավար) պաղաբեր հող, որը 1000 ըուբլի ար-  
ժողութիւն ունի։ Պ. Խորիսուունի, ձեր նպա-  
տակն է եղել ամբողջ հասարակութեան վե-  
րայ մի ստուեր գցել և նորա մէջ գործող  
անձինքների վերայ ամենասուտ և անառակ  
զրպարտութիւններ բարձել։ Պ. Խորիսուունի  
եթէ մենք սկսելու լինինք ձեր կենսագրու-

թիւնը անել, հարիւրաւոր հատորներ էք հարկաւոր ձեր հակա-մարդկալին, և հակա-Քրիստոնէական գործերը գրելու:

Պ. Խորխոռութենի, դուք միշտ մասնաւոր խօսակցութեան մէջ գովել էք մեր Ախալքալաքու հոգեւորականներին, իսկ «Վէրքերումդ» վերին աստիճանի խալտառակել: Մեր հոգևարականոների մեծ մասը չ'նայելով իւրեանց ուսում չունենալներուն, իւրեանց պահում են միշտ լաւ, համեստ, բարի, և իւրեանց քահանայական պաշտօնը վարում են խղճմտաքար: Ժողովուրդը սիրում է սորանց և պատվաւմ է: Հասարակ կրթութիւն ստացածները այդպէս են պահում իւրեանց, իսկ մի բարձր ուսում ստացած քահանայ ալդ բաներից ոչինչ չունի, և չէ վայելում ժողովրդի համակրութիւնը: Նա ոչ մի քահանայական պաշտօն չէ վարում և միշտ իւր միաբանութեան հետ անհաջու է:

12-ն Յունվարի 1883 թ.

Մենք մեր ալու պատասխանը վերջացրել էինք և կամենում էինք ուղարկել տպագրութեան, բայց մեր բարեկամներից մինը արգիլեց, ասելով՝ թէ Պ. Խորխոռութիւնի իւր «Վէր-

քերի» հերքում է գրել: Երկու ամիս սպասելուց ետ այսօր մեր ձեռքն ընկաւ պարոնի «Խորխոռութիւնը» վերնագրով, 22 երեսից և 14 գլուխից բաղկացած բրոշիւրան: Տետրը ծայրից մինչև վերջը թերթելով, մենք երեք բան նկատեցինք, ... եթրե պատասխան իւր վրայի կեղտերին, չ. աւելի կատաղի կերպով լարձակումն մեր քաղաքի ընտիր դասի վերայ և գ. քաղաքիս կինտոնների և մրունների խմբի գործունէութեան փառաբանութիւնը: Եւ ահա այս երեք կետերի վերայ սկսենք խօսել:


Դուք պլ. Խորխոռութիւնի հասարակութեան կարծիքը հաստատում էք և ասում էք, «Այս, Խորխոռութիւնին ևս հարբեցող էր մի քանի տարի առաջ, իսկ այժմ... ոչ: Խորխոռութիւնին, քան և մէկամեալ երիտասարդ, զանազան անտանելի ճնշումների տակ լինելով, մի տարու չափ խմելով է պարապած, որի սկզբնապատճառը մի ազգականի գարշելի եզրւիտականաւթիւնն է եղած, ալդ խոստովանում է նա:» Պ. Խորխոռութիւնի, դուք ձեր հարբեցաղութեան կեղտը ձեր մի ազգականի վերայ էք բարձում, ալդ ինչ լանդգնութիւն է: Ոչ թէ միայն Ախալքալաքու, այլ և Ախալցխայի և Ալէքսանդրապոլի գաւառների փոքր երեխան մին-

չև անգամ գիտէ ձեր ցեղական հարբեցողութիւնը:

Ասացէք խնդրեմ, ձեր պատը, ձեր հայրը, ձեր եղբայրը ինչ մահով մեռան, ձեր հօր եղբայրը ինչ ախտից գժվեց: Միթէ հարբեցողութիւնը չէք պատճառը: Դուք իբրև թէ մի քանի տարի է թողել էք հարբեցողութիւնը: Ո՞վ ասաւ, ումն էք խաբում: Մենք հաստատ ազգիւրներից գիտենք, որ իւրաքանչիւր օր երեք շիշ գինի և արաղ էք գործածում միայն ձեր անձի համար: Միթէ այդ հարբեցողութիւնից հեռանալ է: Արդեօք չէք մտաբերում, երբ անցեալ տարի քաղաքիս պատուաւոր տներից մինում հարբած խայտառակութիւններ էիք անում, տանուտէրը ձեր աստիճանի պատիւը պահելով ներողամիտ գտնուեցաւ: Այս, ես ականատես եմ եղած, այն ձեր ազգականի յուսահատութեանը և արտասուացը, որ նա աղաչում էր բժիշկ պ. Գ. Տ. Գ. մի դեղ, մի հնար գտնելու ձեզ այդ արատից աղատելու համար: Բայց բժշկի պատասխանը միշտ բացասական է լինում, և ասում էր, որ անկարելի էր այդ ախտից բժշկուել: Ես ականատես եմ եղած այդ ձեր ազգականի խնդրելուն ձեր ընկերներին, որ գոքա համոզեն քեզ, ետ մնալու այդ ցաւից: Եւ ահա պ. Խորխո-

ոռւնի գուք չամաչելով ոչ խղճից, ոչ մարդկալին երկիւղից և Աստուածալին պատուհասից, արատաւորում էք այն անձին, որը տարիներով ձեր և ձեր գերգաստանը պահել, խնամել է: Այդ տեսակ ազերախտութիւն միայն ու օչերն է կայութեալ 3452

Դուք ասում էք «Ինչ յանցաւոր է անձնականապէս Խորխուունին, եթէ նորա քոյլը, կամ մի այլ ազգականը անբարոյական լինի, իւրաքանչիւր անհատ, տէրն է միայն իւր անձնական արժանաւորութիւններին և պակասութիւններին և այլն». Այս, պ. Խորխուունի, յանցաւոր է այն գերգաստանի պէտը, որ ըստանձնելով այդ պաշտօնը անընդունակ է գանվում բարոյապէս կառաւարելու իւր ստորագրեալներին: Զէ որ պէտի թուլութիւնիցն է գուրս գալի գերգաստանական անպատվութիւնը և անբարոյականութիւնը Միթէ պ. Խորխուունի Տաճկաստանի կառաւարութիւնը մեղաւոր չէ, որ իւր կառավարութեան մէջ, անընդունակ և թոյլ լինելով իւր ժողովուրդը զարգացըն է անբարոյականութեան, աւազակութեան, արիւնարբութեան, վայրենութեան և ոչ մահմետական ցեղերին հալածելու մէջ: Այս, ծիծագելի կ'լինէք, եթէ Տաճկաստանը իւր բրո-



շիւրներով և քարոզներով յարձակուել Եւրոպալի և Ամերիկալի ծաղկեալ, լուսաւորեալ պետութիւնների և հասարակութիւնների վերայ, ծաղրելով նոցա տաղակաբարոյութիւնը, անդարոյականութիւնը, օրէնքների անխիղճ լինելը, արիւնարբութիւնը, և այլն. Պ. Խորխուունի գուք ձեր բրոշիւրներով քայլայուած Տաճկաստանին չէք նմանում:

Փողերս—փողերս, թող տայ Խորխուունին և յետոյ Համարձակուի բրոշիւրներ գրել և խալտառակել» գոչում են մի քանի կապիտալիստներ: Պ. Խորխուունին ասում է: «Սխալ քալաքեցի աղա—կրեդիտորները ինչպէս սովոր են գիւղացի պարտապաններին գերի և ճորտ դարձնել իրանց թէ՝ նիւթապէս և թէ բարուապէս, նոյն մետոգով կամենում էին վարդել և ինձ հետ»:

Պ. Խորխուունի այդ կապիտալիստները և պարտաքերերը չեն գոռում թէ՝ թող իւր պարտքերը վճարէ, և յետոյ բրոշիւր գրէ, ոչ, նոքա ասում են թէ՝ «խոզը մաքրասիրութեան օրինակ չի կարող դառնալ. պ. Խորխուունին էլ թող իւր անձնական պակասութիւնները դրամէ, և յետոյ ուրիշին լուսաւորութիւն քարոզէ:

Պ. Խորխուունի, մեր ուամիկ ժողովուրդը

գեռ զարգացողութեան այն կետին չէ հասած, որ զբողի կամ հրապարակախօսի միայն զբածին և խօսածին նայէ, նորա անձնականութիւնը չ'որսնէ: Մամիկը տեսնելով իւր դրացուն ամենայն տեսակ կեղծում ջաղաղուած, նորա գրածին և խօսածին չի լսի:

Պ. Խորխուունի, գուք զանազան անձանց մօտ 10000 ըուբլի պարտէք: Ձեր կողմից անխղճութիւն չէ, որ լաւ գիտենալով որ ոչ վաճառականութիւնով, ոչ ձեր ունեցած կարուածներով կարող էք այդ վերցրած պարտէք վճարել: Անխղճութիւն չէ Բնչէ, ուրիշ՝ որդւսց բերանից հացը խլել և իւր փորք հաստացնելու, մի քանի մկնաններ հարթացնել: Ուուք գիտէք, որ ձեր պաշտօնական 300 ըուբլի արդիւնքով 10000 ներով վերցրած պարտքերդ չէք կարող վճարել, և գերդանանդ կառաւարել: Ուրիշը Բնչ պարտական է իւր աշխատանքով ձեզ կերակրել: Այդ անելուց ետք յադգնութիւն ունիք յարձակվելու կապիտալիստների վերայ: Երբ փող են ուալիս նարանք՝ լաւ մարդ են, երբ պահանջում են, դառնում են անխիղճ հարակարագներ: Խնչ, պ. Խորխուունի, մէշքաջ անեն: «Սխալքալքեցի մրատ երես դարբինները և լոթի կամ կինո համարվածները իւրեանց

գործքի մէջ շատ աւելի ազնիւ են՝ քան սաւ մուրի մուշտակների մէջ կոլոլված մի քանի աղաներ...» ասում է ալ. Խորխոռունին:

Պ. Խորխոռունի, տառանց փաստի ֆրազներ կոտրտել հեշտ է, բայց մեղ պէտք է իրականութիւնն Ա՞ւը է քո մրոտի և կինտոի վէհ գործունէութիւնը և հոգին, ցոյց տուր, է:

Գուշ, ալ. Խորխոռունի Սխալքալաքի ժողովուրդը բաժանումէք երկու դասակարգի՝ աղաների և մրոտների կամ կինտոների: Մեր Սխալքալաքում ժողովրդի ոչ մի բաժանմունք չկայ, դարբինն էլ, բազազն էլ, ոսկերիչն էլ, զուռնաշխն էլ, այստեղ աղաներ են իւրեանց համար, ամէն տեղ տիրում է ձայների և խօսքի հաւասարութիւնն: Ընդհանուր ժողովների մէջ անկարգութիւնն և հայկոյութիւնն անողին, իրաւ է, թեւից բռնում արտաքսում են ժողովից:

Պ. Խորխոռունի, քո մրոտները կամ կինտոները ինչ են արել հասարակութեան օգտին, ցոյց տուէք, Խոկ ալդ մրոտների մուրը երեսիդ քսելով ուրանում ես, ինչպէս անուանում ես, աղայական դասի գործերը: Զէ որ ալ. Խորխոռունի, դարանք են, որ քո գոված երիտասարդաց խրճիքներկալացումներին այցելում են, նոցանիւթապէս և բարոյապէս օգնում են, ուսումնարաններին միշտ 100 ներով և 1000 ներով

նպաստում են, դորանք են՝ որ քաղաքիս և ուսումնարաններիս ձրի պաշտօնները միշտ անտրտունջ տանում են, նիւթապէս վնաս քաշելով. չէ որ, էլի ալդ դասն է, որ քաղաքիս աղքատների ծանրութիւնը միշտ իւր վերայ է ընդունում: Քո մրոտը մի օր արած է ալդ գործը: Մենք լաւ հասկանում ենք թէ ինչի էք գովել ալդ դասին, ձեր մի անձնական գործի ծառայեցնելու, և պաշտպան հանդիսացնելու համար:

Պ. Խորխոռունի, գուշ մի երկու բարեկամի նոցա ձեզ «Վէրքերուդ» համար խրատելուն, խոստովանել էք, որ անփորձութիւնից և երիտասարդական թերութիւնից սխալուած գրել էք ալդ: Խոկ ալժմ ձեր «Բացատրութեան» մէջ, ալդ բարեկամներին ծաղրումէք: Ի՞նչ հրապարակախօսի գործ: (?)

Պ. Խորխոռունի, մենք կարծում ենք թէ ձեր «Բացատրութիւններում» գուշ ձեր «Վէրքերի» լարձակմունքները և սխալմունքները դրստելու էք, բայց ինչ կարդացինք: Ելի մի և նոյն փղի մեծութեամբ հայկոյանքներ մեր համարակութեան գլխին և աւելի ծամր կերպով: Դուք, ինչպէս շատերին ասել էք, վեց ամիս սենեակիդ չորս պատերի մէջ մնալով, երևի ենթարկվել էք երևակայական ցնորքներին.

քո բարեկամները՝ ցաւելով քո այդ դրու-  
թեան վերայ, հրաւիրել են մի քանի բժիշկ  
մօլլաներ, փալ բացողներ և կարգացողներ,  
ձեր ուղեղի վերայ մի օպերացիայ անելու-  
ասիական ձևով. որովհետեւ գուշ ձեր «բա-  
զարաւթիւններում» բժշկականութեան փոր-  
ձերին շատ էք դիմել:

¶. ¶. Ախալքալքեցիք, եթէ յանկանում  
էք ազնիւ սիրտ և վեհ հսգի ունենալ, հետե-  
ւեցէք պ. Խորխոռունու գիւտին՝ մըսեցէք  
Զեր երեսները:

Պ. Խորխանունի, դաւք շըջապատելէք ձեզ  
մի երկու ցնձրվածներով և շաղոքորթներով,  
բայց հասարակութիւնը ևս անտարբեր չէ  
դացա գործունէս լժեանը, շուտով կ'վարձարերէ  
նորանց միամիտ եղէք. Ախալքալաքայ հասա-  
րակութիւնը ոչ մի բօպէ չէ աշխատել դանե-  
լու «Ախալք. վերքերու» հեղինակին, նա վա-  
զուց ճանաչում էր ձեզ, իսկ դուք ձեր «բա-  
ցատրութիւններում» ակն յայտնի ձեր ով լի-  
նելը ցայց էք տուել. ուրեմն մնացած մի եր-  
կուսի համար գաղտնիք չ'մնալու ձեր պա-  
տուարժան անձնաւորութիւնը, դիմենք մի  
հասարակ թուաբանական խնդրի. —

Սորտնով վերջացնում ենք մեր պատահիանը, որը կլինի առաջինը և վերջինը:

ВЕРБОВЪ

«Մշակ» լրագիրը իւր հրատարակուելուց  
մինչի այսօր, մեր Ախալքալաքեցոց բարե-  
րար է համարվում, որովհետև նորա շնորհ-  
քով մեզանում ընթերցասիրութիւն տարած-  
վեցաւ: Իւրաքանչիւր Ախալքալաքցի պ. Գրի-  
գոր Ածքրունու անունով էր երդվում: Բայց  
հիմայ հանգամանքները շուռ եկան: Ալժմ  
«Մշակ» եռանգստ-պաշտպան Ախալքալաքը  
քիչ քիչ սառնանում է: —Պատճռու:

—Պատճառը վերջին ժամանակներում դռըս  
ընկած նորա մի երկու թղթակիցների թղթակ-  
ցութիւններն են:

Մենք այս բանում չենք մեղադրում պ.  
Գրիգոր Արծրունուն, որովհետեւ նա Թիֆլի-  
զում նստած չի կարող տեսնել, թէ իւրեան  
թղթակիցները ովքեր են, ինչ զատ են, և  
նոցա գրուածքները ինչ ուզգութեամբ և  
նպատակի համար են գովում:

Ա. Խալքալաքեցին լաւ ճանաչելով այդ թըզ-  
թակիցներին, զըցուանքով է կարգում նոցա  
գրուածքը և ափսոսում է պ. Գ. Սըծըռունուն,

որ այդ տեսակ անձանց հետ կապ ունի:

Շատերը ասում են՝ եթէ «Մշակի» ամէն կողմի թղթակիցները մերինների պէս են, պ. Արծրունուն լաւ ապագայ չէ խոստանում: Այս տեսակ կասկածանքի պատճառով «Մշակ» կարգացողների մեծ մասը, կարգում է նորա առաջնորդող յօդուածները, պ. Ռաֆֆիի գեղեցիկ վեպերը և քաղաքական բաժինը, խոկ լուրերի և նամակների վերայ համարեա ուշք չէ գարձնում: Եւ այս պատճառաւ վերջի տարումս նորա բաժանորդների թիւը բաւական պակասել է:

Մենք իբրև բարեկամ պ. Գ. Արծրունուն և «Մշակի» շերմ համակրող, խորհուրդ ենք տալի որ թղթակիցների նամակները, մանաւանդ պատահականներին, ընտրութեամբ լոյս տեսնին:

Առհասարակ նկատել ենք, որ այսուղի թղթակցութիւնների մեծ մասը շահագիտութիւնից, նախանձախնդրութիւնից և փայլ ի վերոյ գրուածներից է բաղկացած, և խաղաղ ժողովրդի մէջ երկպառակութիւն սերմանում:

Վերջի ժամանակներս այդ բոլանդակութեամբ նամակներ և լուրեր բաւական երեացին «Մշակում», որոնք ժողովրդին կոմի և երկպառակութեան ասպարէզ բացին: Եղբայրը եղբօր

դէմ թշնամացաւ, բարեկամը բարեկամի հետ, ընկերը ընկերի հետ և ալն և այլն:

Ահա այս եւացող դրութեան մէջ «Մեղու Հայաստանին» քիչ քիչ տարածվում է ժողովրդի մէջ և սկսել է ժողովրդականութիւն ստանալ:

Մենք այս յաւելուածը գրեցինք այն նպատակով, որ սորանում գրուածքները մեծ կապ ունին «Ախ. վերքերու» հետ, որովհետև դոքա մի խմբի և մի ձուլտրանի գործ են:

Մենք պատրաստում ենք «1882—83 թիւ Ախալքալաքայ քաղաքի անցքեր» վերնագրով մի պատմութիւն, որը իւր ժամանակին կ'հրատարակենք և որից ամէն մարդ կ'ծանոթանալ թէ մի խումբ չարամիտներ իւրեանց լրագրական յօդուածներով, բրօշիւրներով ինչ ատելութեան սերմեր ցանեցին ամբողջ Ախալքալաքի և զաւառի մէջ, և ինչ լարած որոգայթներով իւրեանց անձնական շահերն առաջ էլն քշում: Իսկ մենք խնդրում ենք եռանդու և գործող երիտասարդութեան չ'վհատվել այդ տեսակ գրվածքներից և գործողներից, և չ'գադարեցնել հասարակա-օգուտ գործունէութեան ըռնած ընթացքը:





Դիմն է 15 կոպ.

Ծախվում է օգուտ Ա.խալքալաքայ Հալոց -  
Ուսումնարանների կից ընթերցաբանին:

Նոյն նպատակի համար և ծախվում է պ.  
Բ. Պիճիկեանցի փոխադրած «Համառօտ» տե-  
սութիւն երկրի և լուսի մտածին» գրքոյկը գինն  
է 25 կոպ.

Այս երկու գրքոյկն ևս վաճառվում են  
Թիֆլիզում Կենտրոնական Գրավաճառանո-  
ցում: Ա.խալքալաքում, Ա.խալցխայում և Ա.  
լէքսանդրապոլում զանազան անձանց մօտ:

2013

«Ազգային գրադարան



NL0039311

